

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՀԵՌԱՆԿԱՐՈՒՄ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԾԱՀՈՒՅԹԻ ՍՏԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ

Վ. Հ. ԱՌԱՎԵԼՅԱՆ

Տնտեսագիրության թեկնածու, դոցենտ
valeriaraqelyan@ysu.am

Ա. Ֆ. ՄԿՐՏՉՅԱՆ

ԵՊՀ գնդեսագիրության ֆակուլտետի
կառավարման և գործարարության ամբիոնի ասիստենտ
mkrtchyananna@ysu.am

Շուկայական հարաբերությունների խորացման պայմաններում, որպեսզի կազմակերպություններն իրենց գործունեության արդյունքում մրցակիցների նկատմամբ հասնեն մրցակցային առավելության, պետք է մշակեն և իրականացնեն արդյունավետ ռազմավարություն՝ սահմանափակ հեռանկարում առավելագույն շահույթ ստանալու նպատակով:

Տվյալ ռազմավարությունը կարող է մշակվել և իրականացվել, եթե կազմակերպությունը համարում է, որ իր ապրանքների համար շուկան գոյություն կունենա որոշակի բավականին կարճ ժամանակ: Նման ռազմավարություն իրականացնելու ժամանակ իր ապրանքների համար գները սահմանում է՝ ենթելով <<պահանջարկ-առաջարկ>> հարաբերակցությունից՝ մոտակա ժամանակահատվածում առավելագույն շահույթ ստանալու նպատակով:

Տնտեսագիտության տեսության սահմաններում տվյալ ռազմավարության տնտեսամաթեմատիկական մոդելի մշակումը ենթադրում է գնի օպտիմալ մակարդակի և դրա հետ կապված՝ առավելագույն շահույթի ստացումը ապահովող արտադրության ծավալների սահմանումը.

$$P_x = Q_x - Z_0 - C_0 \cdot N_x,$$

Որտեղ՝ Q_x – հասույթն է,

Z_0 – հաստատուն ծախսերը ,

C_0 – ն միավոր արտադրանքի հաշվով վարչություն ծախսերն են ,

N_x – իրացնան ծավալ :

Քանի որ հասույթը կարող է հաշվարկվել որպես

$$Q_x = \Pi_x \cdot N_x,$$

իսկ գինը, ենելով պահանջարկի ֆունկցիայից, հավասար է

$$\Pi_x = f(N_x),$$

Ապա շահույթի ստացման մոդելը կունենա հետևյալ տեսքը.

$$P_x = f(N_x)N_x - 3_0 - C_0 N_0:$$

Ծայրագույն կետերը գտնելու համար անհրաժեշտ է դիֆերենցիալ ըստ N_x -ի (եթե կարելի է մոտարկել $\Pi = f(N)$)՝

$$P_x = f(N_x)N_x + f(N_x) - C_0 = 0;$$

Լուծելով հավասարումը N_x -ի նկատմամբ՝ կստանանք N_{opt} , իսկ հետո $\Pi_x = f(N_x)$ կախվածությունից կստանանք Π_{opt} :

$$\frac{dP}{dN} = \frac{d\Pi}{dN} N + \Pi - C_0 = 0;$$

Կատարելով փոփոխություններ՝ կստանանք

$$-\frac{dN/N}{d\Pi/\Pi} = \frac{\Pi}{\Pi - C_0} = \Theta,$$

Որտեղ Թ-ն գնային կորի էլաստիկությունն է:

$$\text{Այստեղից} \quad I_{opt} = \frac{3}{3-1} \times C_0,$$

Π_{opt} համապատասխանում է N_{opt} ըստ պահանջարկի $\Pi = f(N)$ ֆունկցիայի:

Ընդունված է համարել, որ

1. $C_0 = \text{const}$, այսինքն՝ ապրանքի միավորի հաշվով փոփոխուն ծախսերը կախված են ապրանքի քանակից:
 2. $\exists x > 1$:

Այդ դեպքում

$$P_{max} = \Pi_{opt} N_{opt} - 3_0 - C_0 N_{opt},$$

Եթե բացակայում է մոտարկվող կախվածությունը $\mathbb{P} = f(N)$, ապա

$$\left\{ \begin{array}{l} P_1 = \Pi_1 N_1 - 3_0^1 - C_0 N_1 \\ P_2 = \Pi_2 N_2 - 3_0^1 - C_0 N_2 \\ \dots \\ P_n = \Pi_n N_n - 3_0^n - C_0 N_n \end{array} \right\} \rightarrow P_{max}$$

Գծային կախվածության դեպքում

$$\Pi_x = a - bN_x,$$

Onuntu

$$a = \frac{N_{max}\Pi_{max} - N_{min}\Pi_{min}}{N_{max} - N_{min}},$$

$$b = \frac{\Pi_{max} - \Pi_{min}}{N_{max} - N_{min}},$$

Π_{min} , Π_{max} -ը գների դիտարկվող միջակայքին համապատասխանող ներքին և վերին սահմաններն են,

N_{max} , N_{min} -ը պահանջարկին համապատասխանող ներքին և արտաքին սահմաններն են:

Այդ դեպքում

$$P_x = (a - bN_x)N_x - Z_0 - C_0 N_x,$$

$$P'_x = a - 2bN_x - C_0;$$

Այստեղից՝ հավասարեցնելով $P'_x = 0$, կստանանք

$$N_{opt} = \frac{a - C_0}{2b}$$

Կամ կատարելով ընդունված նշանակումները և անհրաժեշտ փոփոխությունները՝ կստանանք

$$N_{min} = \frac{(N_{max} \Pi_{max} - N_{min} \Pi_{min}) - C_0 (N_{max} - N_{min})}{2(\Pi_{max} - \Pi_{min})}$$

$$\Pi_{min} = a - bN_{min} = a - b \frac{a - C_0}{2b} - \frac{a + C_0}{2}$$

Կամ

$$\Pi_{opt} = \frac{N_{max} \Pi_{max} - N_{min} \Pi_{min}}{2(N_{max} - N_{min})} + \frac{C_0}{2}$$

Նման մեթոդաբանությունը, մեր կարձիքով, կարող է կիրառվել մոտարկվող կախվածությունների այլ գների դեպքում: Կարծում ենք՝ ռազմավարության առաջարկված մոդելը կնպաստի կազմակերպության՝ մրցակցային շուկայում առավելության ստացմանը:

Բանալի բառեր՝ ապրանք, ռազմավարություն, մոդել, մեթոդաբանություն, շահույթ, շուկա, գին, ծախսեր, ծավալ:

Օգտագործված գրականություն

1. Фатхутдинов Р.А., Конкурентоспособность организаций в условиях кризиса: экономика, маркетинг, менеджмент, М. , Маркетинг, 2002.
2. Филосова Т.Г., Управление конкурентоспособностью на мировых рынках, М., Научная книга, 2006.

3. Фостер Р., Обновление производства: Атакующие выигрывают, Пер. С англ, М. , Экономика, 2004.

DEVELOPMENT OF MAXIMAL PROFIT GAIN STRATEGY IN A LIMITED PERSPECTIVE

V. H. ARAQELYAN

PhD in Economics, Associate Professor

A. F. MKRTCHYAN

Assistant at the Chair of Management and Business of YSU

The article discusses the issues of development of maximal profit gain strategy in a limited perspective. Profit maximization model, which is based on a unit revenue, fixed and variable costs and volume of sales was developed and suggested. According the authors' opinion, the model can be used in case of approximation dependencies on other prices. Therefore, it can be used to obtain profit maximization in limited timeframe.

РАЗРАБОТКА СТРАТЕГИИ ПОЛУЧЕНИЯ МАКСИМАЛЬНОЙ ПРИБЫЛИ В ОГРАНИЧЕННОЙ ПЕРСПЕКТИВЕ

B. O. ARAKELIAN

Кандидат экономических наук, доцент

Преподаватель ГГУ

A. F. MKRTCHYAN

Ассистент ЕГУ

В статье обсуждены вопросы разработки стратегии обеспечения максимальной прибыли в ограниченной перспективе. Разработана и предложена основанная на выручке, постоянных и переменных издержках в расчете на единицу продукции и объемах реализации модель получения максимальной прибыли. По мнению авторов предложенная модель может быть применена при аппроксимирующих зависимостях в условиях других цен. Следовательно, она может быть применена для получения максимальной прибыли в ограниченном периоде.